«Գովեմ զՔեզ»՝ Laudato Si, նամակին նվիրված շաբաթ

«ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ԵՐԳԸ»

Բարձրյա՛լ, ամենակարո՛ղ, բարի՛ Աստված,
Գոհություն, փա՛ռք ու պատի՛վ եւ օրհնությո՛ւն Քեզ,
Մի՛այն Քեզ են պատկանում։
Եւ չկա մի մարդ, որ արժանի լինի Քո անունը տալու։
Գոհությո՛ւն Քեզ, իմ Տե՛ր, Քո բոլոր արարածների հետ միասին,
Հատկապես իմ եղբայր արեւի,
Որ տալիս է լույսը օրվա,
Ում միջոցով տալիս ես պայծառությունը։
Եվ գեղեցիկ է նա եւ շողշողուն, չքեղ,
Եվ տալիս է Քո մեծության նշանը։
Գոհությո՛ւն Քեզ, իմ Տեր՝ իմ քույրիկ լուսնի համար եւ աստղերի համար,
Երկնքում Դու ձեւավորեցիր դրանք՝ պարզ, սիրունիկ ու ազնիվ։
Գոհությո՛ւն Քեզ՝ իմ եղբայր քամու համար եւ օդի ու ամպերի համար եւ ամեն տեսակ եղանակների համար,
Որոնցով սնում ես Քո բոլոր արարածներին։
Գոհությո՛ւն Քեզ, Տեր, իմ քույրիկ ջրի համար,
Որ այնքա՛ն օգտակար է եւ խոնարհ, հիասքանչ ու ջինջ։
Գոհությո՛ւն Քեզ, Տեր՝ եղբայր կրակի համար,
Որով լուսավորում ես խավարը,
Եվ մաքուր է այն, զվարթ եւ ուժեղ։
Գոհությո՛ւն Քեզ, Տեր՝ մեր քույրիկ, մեր մայր երկրի համար,
Որ ապրեցնում ու պահում է մեզ
Եվ աճեցնում է պտուղներ զանազան եւ խոտ եւ ծաղիկներ պայծառ։
Գոհությո՛ւն Քեզ, Տեր, նրանց համար, ովքեր ներում են՝ հանուն Քո սիրո,
Եվ կրում են տկարություն ու փորձություն։
Երանի՛ նրանց, ովքեր կհարատեւեն խաղաղության մեջ,
Որովհետեւ Քեզնով նրանք կպսակվեն։
Գոհությո՛ւն Քեզ, Տեր՝ մեր քույրիկ մահվան համար, որին ենթակա է մարմինը եւ որից ոչ մի կենդանի մարդ արարած չի կարող փախչել։
Վա՛յ նրանց, ովքեր մեռնում են ծանր մեղքի մեջ։
Երանի՛ նրանց, ովքեր մնում են հավատարիմ Քո ամենասուրբ կամքին։
Որովհետեւ երկրորդ մահը նրանց չի կարող վնասել։
Գոհությո՛ւն Քեզ, Տեր, օրհնությո՛ւն Քեզ, Տեր,
Շնորհակալ եղե՛ք Տիրոջը
Հնազանդվե՛ք Տիրոջը խոնարհությամբ։

Սբ. Ֆրանցիսկոս Ասիզեցի, 1182–1226
Թարգմ.՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան

Դանիելի մարգարեություն, 4, 57-89

Օրհնեցէ՛ք Տիրոջ բոլոր գործերը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Երկինքնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Տիրոջ հրեշտակնե՛ր, օրհնեցէք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Ջրե՛ր, որ վեր էք երկնքից, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Տիրոջ բոլո՛ր զօրութիւններ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պան-
ծացրէ՛ք նրան յաւիտեան:
Արե՛ւ եւ լուսի՛ն, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Երկնքի բոլո՛ր աստղեր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան: Անձրեւնե՛ր եւ ցօղե՛ր, բոլորդ օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Հողմե՛ր, բոլորդ օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Հո՛ւր եւ տա՛պ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Ցո՛ւրտ եւ սառնամանի՛ք, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Եղեա՛մ եւ ձի՛ւն, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Ցերեկնե՛ր եւ գիշերնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Լո՛յս եւ խաւա՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Ամպե՛ր եւ կայծակնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան: Թող երկիրն օրհնի՛ Տիրոջը, օրհնի եւ պանծացնի նրան յաւիտեան:
Լեռնե՛ր, բարձունքնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան: Երկրի բոլոր բոյսեր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Աղբիւրնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Ծովե՛ր ու գետե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Կէտե՛ր եւ ջրային բոլո՛ր կենդանիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Երկնի թռչուններ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Բոլո՛ր գազաններ եւ անասուններ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Մարդո՛ւ որդիներ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Իսրայէլը թող օրհնի Տիրոջը, թող օրհնի եւ պանծացնի նրան յաւիտեան:
Քահանանե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան: Տիրոջ ծառանե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Արդարների շունչ ու հոգինե՛ր, օրհնեցէ՛ք Աստծուն, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Սրբե՛ր եւ սրտով խոնարհնե՛ր, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան:
Անանիա՛, Ազարիա՛ եւ Միսայէ՛լ, օրհնեցէ՛ք Տիրոջը, օրհնեցէ՛ք եւ պանծացրէ՛ք նրան յաւիտեան, քանզի նա մեզ փրկեց դժոխքից, ազատեց մահուան ձեռքից, փրկեց մեզ այս հնոցից, այս բորբոքուած բոցի միջից, փրկեց մեզ այս կրակի միջից:
Գոհութիւն մատուցենք Տիրոջը, քանզի քաղցր է նա, քանզի յաւիտեան է ողորմութիւնը նրա:

Գովեմ զՔեզ շաբաթվան նվիրված աղոթք, 2020

«Սիրասուն Աստուա՛ծ,
Արարիչ երկնքի եւ երկրի, եւ այն ամէնի՝ ինչ կայ դրանց մէջ,
Դու ստեղծեցիր մեզ Քո պատկերով եւ տնտեսներ կարգեցիր Քո արարչագործութեան։

Դու օրհնեցիր մեզ՝ չնորհելով արեւը, ջուրն ու այս բերրի հողը, որպէսզի սնուցանես բոլորիս։

Լուսաւորի՛ր մեր միտքն ու դիպչի՛ր մեր սրտերին, որպէսզի կարողանանք հոգ տանել այն աշխարհի մասին, որ պարգեւել ես մեզ։

Օգնի՛ր գիտակցել, որ երկիրը՝ մեր բոլորի տունը, պատկանում է ոչ միայն մեզ, այլեւ՝ Քո բոլոր արարածներին եւ ապագայ սերունդներին, ուստի, մեր պարտքն է պահպանել այն։

Օգնի՛ր սատար լինել ամէն մէկին, ով կարիքն ունի սնունդի եւ կենսական միջոցների։

Օգնի՛ր փորձութեան այս ժամին նեցուկ լինել կարիքի մէջ գտնուողներին՝ յատկապէս կարօտեալներին եւ բոլոր նրանց, ում սպառնում է լքուած լինելու վտանգը։

Թող որ մեր վախերն ու մենութեան տագնապը դառնան յոյսի եւ եղբայրասիրութեան զգացումներ, որպէսզի բոլորս ապրենք հոգու ճշմարիտ դարձը։

Օգնի՛ր լինել ստեղծարար եւ միաբան, որպէսզի կարողանանք դիմակայել ու մեղմել համաշխարհային այս համաճարակի հետեւանքները,

Օգնի՛ր լինել խիզախ եւ ընդունել անհրաժեշտ փոփոխութիւնները՝ ի բարօրութիւն համայն մարդկութեան,

Այսօր, առաւել քան երբեւէ, պէտք է հասկանանք, որ բոլորս փոխկապակցուած ենք եւ կարիքն ունենք միմեանց,

Օգնի՛ր, որ կարողանանք լսել եւ պատասխանել Երկիր մոլորակի եւ աղքատների աղաղակին։

Թող որ տառապանքի այս երկունքից ծնունդ առնի մի նոր՝ աւելի եղբայրական եւ կենսունակ աշխարհ։

Աստուածամօր սիրով լի հայեացքի ներքոյ մեր աղօթքն ենք բարձրացնում առ Քրիստոս։

Ամէն։

Աղոթքի թարգմանությունը՝ Վատիկան Նյուզ, հայկական բաժին